Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
դեկտեմբերի 24-ի նիստի N 56
արձանագրային որոշման

Քեյ Բի Սի Բանկ

Գլխավոր գրասենյակ

Ֆինանսական հարցերով վարչություն

Արտահանման ֆինանսավորում

BHM - Havenlaan 12 - B-1080 Brussel

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Մելիք-Ադամյան 1 փողոց,Երևան 0010**

**Կրկնօրինակը՝ ՀՀ առողջապահության նախարարություն**

**Կառավարական տուն 3, Երևան 0010**

**Պարոն Գագիկ Խաչատրյանին**

**Թեմա՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ֆինանսների նախարարության Քեյ Բի Սի Բանկի միջև 5,374,691.46 եվրո արժողությամբ Վարկային համաձայնագիր, Փոխոխություն № 1, Փոխոխություն № 2 և Փոխոխություն № 3**

**Հարգելի պարոն Խաչատրյան**

Հղում ենք կատարում 2010թ. նոյեմբերի 23-ին ստորագրված վարկային համաձայնագրին, 2013թ. հոկտեմբերի 21-ին ստորագրված Փոխոխություն № 1-ին, 2014թ. նոյեմբերի 4-ին ստորագրված Փոխոխություն № 2-ին և 2015թ. սեպտեմբերի 17-ին ստորագրված Փոխոխություն № 3-ին (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր): Եթե հետայսու այլ բան սահմանված չէ, մեծատառով դրույթներն ունեն Համաձայնագրով սահմանված նշանակությունները:

Վարկային համաձայնագիրը ստորագրվել է 4,808,142.0 եվրո արժողությամբ բելգիական ION BEAM Application A.S.-ի և Հայաստանի Հանրապետության/էկոնոմիկայի նախարարություն միջև 2010թ. նոյեմբերի 23-ին ստորագրված և 2012թ. հունիսի 4-ին Փոխոխություն № 1-ի պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագիր): Ձեր կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, Պայմանագրի ներքո գնորդը փոփոխվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության:

Սույն գրությամբ ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ Վարկային համաձայնագրով նախատեսված Աղյուսակ 4-ը «Վարկատուին տրամադրվելիք փաստաթղթերը: պետք է սահմանվի հետևյալ կերպ.

5) Պայմանագրի մեկնարկային գնի 5%-ը, այսինքն՝ 240,406 եվրո (երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր վեց եվրո) տեղադրման և ընդունման փորձարկումների, ինչպես նաև Tc99 գեներատորներ մատակարարման մեկնարկի համար պետք է վճարվեն Վարկատուի կողմից Մատակարարին Վարկից մասհանմամբ, այն ժամանակ, երբ Մատակարարը Վարկատուին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի պատճեները:

- մատակարարի կողմից ստորագրված առևտրային հաշիվ ապրանքագիրը;
- կատարողականի երաշխիք:

6) Պայմանագրի մեկնարկային գնի 5%-ը, այսինքն՝ 240,407 եվրո (երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր յոթ եվրո) տեղադրման և ընդունման փորձարկումների (I123, I124 և Aposense արտադրության կարողություններ համար անհրաժեշտ բոլոր հավելյալ սարքավորումները) համար պետք է վճարվեն Վարկատուի կողմից Մատակարարին Վարկից մասհանմամբ, այն ժամանակ, երբ Մատակարարը Վարկատուին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի պատճեները:

- մատակարարի կողմից ստորագրված առևտրային հաշիվ ապրանքագիրը;
- կատարողականի երաշխիք:

Նկատի ունեցեք, որ մասհանումներ ենթակա են լինելու Delcrede/Ducroie-ի հաստատմանը:

Վարկային համաձայնագրի ենթակետ ii-ի Կետ 18.1-ին հակառակ փոփոխության վճար չի կատարվելու:

Սույն գրությամբ չփոփոխված Համաձայնագրի մյուս բոլոր պայմաններն ու դրույթները մնում են անփոփոխ:

Սույն գրությունն ուղարկում ենք երեք օրինակից և խնդրում պատշաճ կերպով ստորագրված մեկ օրինակ վերադարձնել մեզ

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

**Հարգանքով՝**

**Վարկատու՝**

**Արտահանման ֆինանսավորում,**

**Ֆինանսական հարցերով վարչության կառավարիչ**

**Միլենա Բոգարթս**

**Արտահանման ֆինանսավորում,**

**Ֆինանսական հարցերով վարչության կառավարիչ**

**Վիկի Հոբուրդին**

Պայմանագրի ներքո Գնորդ

Վարկառու՝

Ֆինանսների նախարար

Պարոն Գագիկ Խաչատրյան